

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության և Բենիլյուքսի պետությունների (Բելգիայի Թագավորության, Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության և Նիդերլանդների Թագավորության) միջև անօրինական բնակություն հաստատած անձանց վերադարձնելու մասին

Հայաստանի Հանրապետությունը և Բենիլյուքսի պետությունները (Բելգիայի Թագավորություն, Լյուքսեմբուրգի Մեծ Դքսություն և Նիդերլանդների Թագավորություն), որոնք գործում են համատեղ՝ 1960 թվականի ապրիլի 11-ի՝ Բենիլյուքսի Կոնվենցիայի դրույթների հիման վրա, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,

ցանկանալով համագործակցության ոգով և փոխադարձության հիման վրա դուրսացնել մյուս Պայմանավորվող կողմի տարածքում անօրինական բնակություն հաստատած անձանց վերադարձը, այսինքն՝ այն անձանց, ովքեր չեն բավարարում կամ այլևս չեն բավարարում մուտքի կամ բնակության գործող պայմանները, ինչպես նաև հետ վերադարձնելու ենթակա անձանց տարանցումը, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Սահմանումները և կիրառման ոլորտը

1) Սույն Համաձայնագրի նպատակներով «տարածք» ասելով՝ պետք է հասկանալ.

1. Հայաստանի Հանրապետության համար՝ Հայաստանի Հանրապետության տարածքը.

2. Բենիլյուքսի համար՝ Բելգիայի Թագավորության, Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության և Նիդերլանդների Թագավորության տարածքների ամբողջությունը Եվրոպայում:

2) Սույն Համաձայնագրի նպատակներով՝

1. «անօրինական բնակություն հաստատած անձ» ասելով՝ պետք է հասկանալ՝ յուրաքանչյուր անձ, ով, հայցող Պայմանավորվող կողմի տարածքում գտնվելով, չի բավարարում կամ այլևս չի բավարարում մուտքի կամ բնակության գործող պայմանները.

2. «երրորդ պետություն» ասելով՝ պետք է հասկանալ՝ Հայաստանի Հանրապետությունից և Բենիլյուքսի պետություններից բացի ցանկացած այլ պետություն.

3.«երրորդ պետության քաղաքացի» ասելով՝ պետք է հասկանալ՝ յուրաքանչյուր անձ, ով չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության կամ Բենիլյուքսի պետությունների քաղաքացի.

4.«ապատրիդ» ասելով՝ պետք է հասկանալ՝ անձ, որի կարգավիճակը սահմանված է 1954 թվականի սեպտեմբերի 28-ի՝ Ապատրիդների կարգավիճակի մասին Կոնվենցիայով.

5. «սահմաններ»՝

- հատվող առաջին սահմանը, որն ընդհանուր չէ Պայմանավորվող կողմերի համար,

- ցանկացած օդանավակայան կամ ծովային նավահանգիստ, որը գտնվում են Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Բենիյուքսի տարածքում, որի միջոցով իրականացվում է երրորդ պետությունից ժամանող կամ երրորդ պետություն մեկնող անձանց տեղաշարժը:

Հոդված 2

Քաղաքացիներին վերադարձնելը

1) Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, մյուս Պայմանավորվող կողմի դիմումով, առանց ձևականությունների, իր տարածք է վերադարձնում անօրինական գտնվող յուրաքանչյուր անձի, երբ կարող է ապացուցվել կամ իրավաչափորեն ենթադրվել, որ այդ անձը հայցվող Պայմանավորվող կողմի քաղաքացի է:

2) Հայցող Պայմանավորվող կողմի խնդրանքով և 4-րդ հոդվածի դրույթներին համապատասխան՝ հայցվող Պայմանավորվող կողմը երեք աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է վերադարձվող անձանց վերադարձման համար անհրաժեշտ ճամփորդական փաստաթղթերը:

3) Հայցող Պայմանավորվող կողմը նույն պայմաններով հետ է ընդունում այդ անձին, եթե հետագա ստուգումներից պարզվում է, որ վերջինս հայցող Պայմանավորվող կողմի տարածքից դուրս գալու պահին չի ունեցել հայցվող Պայմանավորվող կողմի քաղաքացիություն:

Հոդված 3

Երրորդ պետության քաղաքացիներին կամ ապատրիդներին վերադարձնելը

1) Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, մյուս Պայմանավորվող կողմի դիմումով և առանց ձևականությունների, իր տարածք է վերադարձնում երրորդ պետության քաղաքացիներին կամ ապատրիդներին, ովքեր չեն բավարարում կամ այլևս չեն բավարարում հայցող Պայմանավորվող կողմի տարածքում մուտքի կամ բնակության պայմանները, երբ կրող է ապացուցվել կամ իրավաչափորեն ենթադրվել, որ այդ անձինք այն պահին, երբ արձանագրվել է նրանց անօրինական

գտնվելը հայցող Պայմանավորվող կողմի տարածքում, ունեցել են հայցվող Պայմանավորվող կողմի տարածքում կանոնավոր բնակվելու իրավունք:

2) Հայցող Պայմանավորվող կողմի խնդրանքով և 4-րդ հոդվածի դրույթներին համապատասխան՝ հայցվող Պայմանավորվող կողմը երեք աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է վերադարձման ենթակա անձանց վերադարձնելու համար անհրաժեշտ ճամփորդական փաստաթղթերը:

Հոդված 4

Ինքնություն և քաղաքացիություն

1) 2-րդ հոդվածի 1-ին կետով և 3-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ընթացակարգերով վերադարձվող անձի ինքնությունը և քաղաքացիությունը կարող են ապացուցվել հետևյալ փաստաթղթերով.

- անձը (ինքնությունը) հաստատող ազգային վավերական փաստաթուղթ,
- վավերական անձնագիր կամ ճամփորդական փաստաթուղթ (*laissez-passer*)՝ լուսանկարով,
- վավերական զինվորական գրքույկ կամ զինված ուժերի անձնակազմի՝ ինքնությունը հաստատող այլ փաստաթուղթ՝ լուսանկարով,
- վերոհիշյալ փաստաթղթերից մեկը, որի վավերականության ժամկետը լրացել է վերադարձնելու մասին դիմումի ստացման օրը:

2) Ինքնությունը և քաղաքացիությունը կարող են իրավաչափորեն ենթադրվել հետևյալ փաստաթղթերով.

- բացի նախորդ կետում նշվածներից՝ այլ պաշտոնական փաստաթուղթ, որը թույլ կտա հաստատել տվյալ անձի ինքնությունը (վարորդական իրավունքի վկայական և այլն),
- հյուպատոսական գրանցումը հավաստող փաստաթուղթ, քաղաքացիության վկայական կամ քաղաքացիական կացության վկայական:

3) Ինքնության և քաղաքացիության մասին ենթադրությունը կարող է նաև ամրապնդվել հետևյալ տարրերից որևէ մեկով.

- բարեխիղճ որևէ վկայի բացատրության արձանագրություն՝ կազմված հայցող Պայմանավորվող կողմի իրավասու մարմինների կողմից,
- այլ փաստաթղթեր, որոնք թույլ են տալիս հաստատելու տվյալ անձի ինքնությունը,
- վերը նշված փաստաթղթերի լուսապատճեններ,

- տվյալ անձի հետ հարցազրույցի արձանագրություն՝ պատշաճորեն կազմված հայցող Պայմանավորվող կողմի իրավասու մարմինների կողմից.

- լեզուն, որով արտահայտվում է տվյալ անձը:

Հոդված 5

Վերադարձնելու մասին դիմում ներկայացնելը

1) Վերադարձնելու մասին ցանկացած դիմում ներկայացվում է գրավոր և պետք է պարունակի.

1. տվյալ անձի անհատական տվյալները /անունը, ազգանունը, անհրաժեշտության դեպքում՝ նախկին ազգանունները, ուրիշից վերցված ազգանունները, ծածկանունները և մականունները, ծննդյան տարեթիվ-ամսաթիվը և վայրը, սեռը և բնակության վերջին վայրը/.

2. անձնագրի կամ առկա ճամփորդական փաստաթղթի նկարագիրը (մասնավորապես՝ համարը, սերիան, տրամադրման վայրը և ամսաթիվը, վավերականության ժամկետը, տրամադրող իրավասու մարմինը) և/կամ այլ փաստաթղթային ապացույց, որը թույլ կտա հաստատել կամ ապացուցել տվյալ անձի քաղաքացիությունը.

3. ինքնությունը հաստատող 2 լուսանկար:

2) Հայցող Պայմանավորվող կողմը կարող է հայցվող Պայմանավորվող կողմին տրամադրել վերադարձման ընթացակարգի համար օգտակար այլ տեղեկատվական տարրեր:

3) Վերադարձնելու մասին դիմումը ներկայացվում է հայցվող Պայմանավորվող կողմի իրավասու դիվանագիտական ներկայացուցչություն կամ հյուպատոսական հիմնարկ և պետք է պարունակի վերադարձնելու դիմումի մեջ թվարկված փաստաթղթերը: Դիմումի և դրան կից փաստաթղթերի հանձնման/ընդունման մասին կազմվում է արձանագրություն:

Հոդված 6

Ժամկետները

1) Հայցվող Պայմանավորվող կողմը անհապաղ՝ առավելագույնը 30 օրվա ընթացքում, պատասխանում է վերադարձնելու մասին իրեն հասցեագրված դիմումներին:

2) Հայցվող Պայմանավորվող կողմը անհապաղ՝ առավելագույնը մեկամսյա ժամկետում, իր տարածք է վերադարձնում այն անձին, ում վերադարձնելու հարցը դրական լուծում է ստացել: Հայցող Պայմանավորվող կողմի խնդրանքով՝ այս

Ժամկետը կարող է երկարացվել այնքան, որքան պահանջում են իրավական և գործնական բնույթի խոչընդոտները:

Հոդված 7

Վերադարձնելու մասին դիմումի ձևակերպման ժամկետները

1) Պայմանավորվող կողմերից մեկի քաղաքացուն վերադարձնելու մասին դիմումը կարող է ձևակերպվել ցանկացած պահի:

2) Երրորդ պետության քաղաքացուն կամ ապատրիդին վերադարձնելու մասին դիմումը պետք է ձևակերպվի առավելագույնը մեկ տարվա ընթացքում՝ հաշված այն օրվանից, երբ Պայմանավորվող կողմն արձանագրել է այդ անձի մուտքն ու ներկայությունը իր տարածքում:

Հոդված 8

Տարանցումը

1) Չհակասելով 12-րդ հոդվածին՝ Պայմանավորվող կողմերը թույլ են տալիս իրենց տարածքով երրորդ պետության քաղաքացիների կամ ապատրիդների տարանցում, եթե այդ մասին դիմում է մյուս Պայմանավորվող կողմը, և եթե նրանց տարանցումը հնարավոր երրորդ պետություններով և նրանց ընդունումը նշանակման պետությունում երաշխավորվում է:

2) Հայցվող Պայմանավորվող կողմի կողմից տարանցիկ վիզայի տրամադրումը պարտադիր չէ:

3) Պայմանավորվող կողմերը կարող են մերժել տարանցումը այն դեպքում, երբ երրորդ պետության քաղաքացին կամ ապատրիդը նշանակման պետությունում կամ տարանցման պետությունում կարող է ենթարկվել խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի, մահապատժի, հետապնդման՝ ռասայական, կրոնական, ծագումի կամ ազգության, որևէ սոցիալական խմբի պատկանելության կամ քաղաքական համոզմունքների պատճառով:

4) Չնայած տրված թույլտվությանը՝ տարանցման նպատակով ընդունված անձինք կարող են վերադարձվել մյուս Պայմանավորվող կողմին, եթե սույն հոդվածի 3-րդ կետում կամ 12-րդ հոդվածում նշված պայմաններն այնպիսի բնույթի են, որ խոչընդոտում են տարանցումը կամ ի հայտ են եկել անսպասելիորեն, կամ եթե այլևս չի երաշխավորվում նրանց ճամփորդության ընթացքը կամ ընդունումը նշանակման պետությունում:

5) Պայմանավորվող կողմերը ջանում են վերոհիշյալ 1-ին կետում նշված տարանցման գործողություններն իրականացնել միայն այն երրորդ պետությունների քաղաքացիների կամ ապատրիդների նկատմամբ, ովքեր չեն կարող ուղղակիորեն փոխադրվել իրենց նշանակման պետություն:

Հոդված 9

Տվյալների պաշտպանությունը

Անձնական բնույթի տվյալների հաղորդումը կիրականացվի միայն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինների կողմից սույն Համաձայնագրի կատարման համար: Անձնական բնույթի տվյալների օգտագործումը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կիրականացվի Հայաստանի Հանրապետության օրենսդրության, իսկ երբ հսկողությունն իրականացվում է Բենիլյուքսի պետություններից յուրաքանչյուրի իրավասու մարմնի կողմից՝ անձնական բնույթի տվյալների պաշտպանության և այդ տվյալների ազատ շրջանառության մասին 1995 թվականի հոկտեմբերի 24-ի 95/46/ CE դիրեկտիվի, ինչպես նաև այդ դիրեկտիվի կիրառման նպատակով ընդունված՝ այդ պետությունների ազգային օրենսդրության դրույթների համաձայն: Բացի այդ՝ կկիրառվեն հետևյալ սկզբունքները.

1. վերադարձվող անձանց անձնական տվյալների հետ կվարվեն օրենքով և արդարությամբ.

2. անձնական բնույթի տվյալները կհավաքվեն կոնկրետ, հստակ նպատակով, և սույն Համաձայնագրի կատարմանը նպաստելու հանգամանքով արդարացված. այդ տվյալները չեն կարող օգտագործվել դրանց նպատակի հետ անհամատեղելի ձևով ոչ դրանք փոխանցող, ոչ էլ ստացող մարմինների կողմից.

3. անձնական բնույթի տվյալները պետք է լինեն համարժեք, պատշաճ և առանց չափազանց լինելու այն նպատակի համեմատ, որի համար դրանք հավաքվել են և/կամ օգտագործվել. մասնավորապես, հաղորդված անձնական բնույթի տվյալները պետք է վերաբերեն բացառապես հետևյալին.

- կոնկրետ տվյալներ վերադարձման ենթակա անձի մասին (օրինակ՝ անուն, ազգանուն, նախկին ազգանուն, ծածկանուն կամ մականուն, ծննդյան տարեթիվ-ամսաթիվ և վայր, սեռ, ներկայիս և նախկին քաղաքացիություն),

- անձնագիր կամ ինքնության վկայական (համարը և սերիան, վավերականության ժամկետը, տրամադրման ժամկետը, տրամադրող մարմինը, տրամադրման վայրը),

- տարանցման վայրը և փոխադրման երթուղին,

- ցանկացած այլ տեղեկություն, որն անհրաժեշտ է, սույն Համաձայնագրին համապատասխան, վերադարձման ենթակա անձի ինքնությունը որոշելու կամ վերադարձման դիմումը քննելու համար.

4. անձնական բնույթի տվյալները պետք է լինեն հստակ և անհրաժեշտության դեպքում՝ թարմացված.

5. անձնական բնույթի տվյալները, որոնք տրամադրվել են այն ձևով, որը թույլ է տալիս որոշել համապատասխան անձանց ինքնությունը, չեն կարող պահպանվել ավելի երկար ժամկետով, քան պահանջվում է այն նպատակն իրականացնելու համար, որի համար դրանք հավաքվել և օգտագործվել են.

6. թե՛ տվյալները փոխանցող և թե՛ ստացող մարմինները պետք է ձեռնարկեն բոլոր ողջամիտ միջոցները, որպեսզի անհրաժեշտության դեպքում ապահովեն անձնական բնույթի տվյալների ուղղումը, ոչնչացումը կամ պահպանումը այն դեպքում, երբ դրանց օգտագործումը չի համապատասխանում սույն հոդվածի դրույթներին. մասնավորապես, երբ տվյալները համարժեք, պատշաճ և հստակ չեն, կամ երբ դրանք չափազանց են դրանց օգտագործման նպատակների համեմատ: Սրա տակ հասկացվում է նաև, որ ցանկացած ուղղման, ոչնչացման կամ պահպանման մասին պետք է հայտնել մյուս Պայմանավորվող կողմին.

7. տվյալներն ստացող մարմինը այդ տվյալների օգտագործման և դրա արդյունքում ստացված արդյունքների մասին պետք է տեղեկացնի դրանք փոխանցող մարմնին, եթե վերջինս դա խնդրում է.

8. անձնական բնույթի տվյալները կարող են հաղորդվել միայն իրավասու մարմիններին: Ցանկացած այլ հաղորդում այլ ատյաններին պետք է նախապես համաձայնեցվի տվյալները փոխանցող մարմնի հետ.

9. ինչպես տվյալները փոխանցող, այնպես էլ դրանք ստացող մարմինները պարտավոր են գրավոր գրանցել անձնական բնույթի տվյալների հաղորդումը և ստացումը:

Հոդված 10

Ծախսերը

1) 2-րդ և 3-րդ հոդվածների համաձայն վերադարձվող անձանց ճանապարհածախսը՝ մինչև հայցվող Պայմանավորվող կողմի սահման, ինչպես նաև 2-րդ հոդվածի 3-րդ կետում նշված ծախսերը իր վրա է վերցնում հայցող Պայմանավորվող կողմը:

2) 8-րդ հոդվածի համաձայն տարանցման ծախսերը՝ մինչև նշանակման պետության սահման, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, հետդարձի ծախսերը իր վրա է վերցնում հայցող Պայմանավորվող կողմը:

Հոդված 11

Փորձագետների կոմիտե

1) Պայմանավորվող կողմերը միմյանց աջակցում են սույն Համաձայնագրի կատարման և մեկնաբանման հարցում: Այս նպատակով նրանք ստեղծում են փորձագետների կոմիտե, որը.

1. հետևում է սույն Համաձայնագրի կատարմանը.
 2. առաջարկություններ է ներկայացնում սույն Համաձայնագրի կատարման հետ կապված խնդիրների լուծման վերաբերյալ.
 3. առաջարկություններ է մշակում սույն Համաձայնագիրը փոփոխելու կամ լրացնելու նպատակով.
 4. մշակում և առաջարկում է համապատասխան միջոցառումներ՝ ուղղված անօրինական ներգաղթի դեմ պայքարին:
- 2) Պայմանավորվող կողմերն իրենց իրավունք են վերապահում հավանության տալ կամ չտալ կոմիտեի առաջարկած միջոցառումներին:
- 3) Կոմիտեն բաղկացած է Հայաստանի Հանրապետության մեկ և Բենիլյուքսի երեք ներկայացուցիչներից: Պայմանավորվող կողմերը նրանցից ընտրում են նախագահ և տեղակալներ: Բացի այդ՝ նրանք նշանակում են նաև փոխարինող անդամներ: Խորհրդակցություններին կարող են մասնակցել նաև այլ փորձագետներ:
- 4) Կոմիտեն հավաքվում է ըստ անհրաժեշտության՝ Պայմանավորվող կողմերից մեկի առաջարկությամբ:

Հոդված 12

Այլ համաձայնագրերի հետ առնչությունը

Սույն Համաձայնագիրը չի ազդում այն պարտավորությունների վրա, որոնք բխում են.

1. 1951 թ. հուլիսի 28-ի՝ Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայից՝ փոփոխված 1967 թ. հունվարի 31-ի՝ Փախստականների կարգավիճակի մասին արձանագրությամբ, և 1954 թ. սեպտեմբերի 28-ի՝ Ապատրիդների (քաղաքացիություն չունեցող անձանց) կարգավիճակի մասին կոնվենցիայից
2. հանձնման և տարանցման վերաբերյալ պայմանագրերից
3. 1950 թ. նոյեմբերի 4-ի՝ Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայից
4. եվրոպական համայնքային իրավունքից՝ Բելգիայի Թագավորության, Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության և Նիդերլանդների Թագավորության առումով.
5. 1985 թ. հունիսի 14-ի՝ Ընդհանուր սահմանների վրա ստուգումների աստիճանական վերացման մասին Շենգենյան համաձայնագրից և 1990 թ. հունիսի 19-ի՝ Շենգենյան այս համաձայնագրի կիրառման մասին կոնվենցիայից.

6. ապաստանի վերաբերյալ միջազգային կոնվենցիաներից և Խորհրդի՝ 2003 թ. փետրվարի 18-ի՝ (CE) n՝ 343/2003 կանոնից, որը սահմանում է այն անդամ պետության որոշման չափանիշները և մեխանիզմները, որը պատասխանատու է անդամ պետություններից որևէ մեկին երրորդ երկրի քաղաքացու ներկայացրած՝ ապաստան խնդրելու դիմումը քննարկելու հարցում:

7. օտարերկրյա քաղաքացիներին վերադարձնելու մասին միջազգային կոնվենցիաներից և համաձայնագրերից:

Հոդված 13

Կիրառման արձանագրություն

Սույն Համաձայնագրի կիրառման համար անհրաժեշտ այլ գործնական դրույթները ամրագրված են Կիրառման արձանագրության մեջ:

Հոդված 14

Տարածքային կիրառումը

Ինչ վերաբերում է Նիդերլանդների Թագավորությանը, սույն Համաձայնագրի կիրառումը կարող է տարածել Նիդերլանդական Անթիլների և Արուբայի վրա՝ այդ մասին ծանուցելով սույն Համաձայնագրի ավանդապահ Բելգիայի Թագավորության Կառավարությանը, որն էլ այդ մասին կտեղեկացնի մյուս Պայմանավորվող կողմերին:

Հոդված 15

Ուժի մեջ մտնելը

1) Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին Բելգիայի Թագավորության Կառավարությանը Պայմանավորվող կողմերից վերջինի ծանուցելու օրվան հաջորդող երկրորդ ամսվա առաջին օրը:

2) Բելգիայի Թագավորության Կառավարությունը յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի կտեղեկացնի 1-ին կետում նշված ծանուցումների մասին և սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթվի մասին:

Հոդված 16

Կասեցումը և չեղյալ հայտարարումը

1) Սույն Համաձայնագիրը կնքված է անորոշ ժամկետով:

2) Հայաստանի Հանրապետությունը և Բելգիայի Թագավորությունը, Լյուքսեմբուրգի Մեծ Դքսությունը և Նիդերլանդների Թագավորությունը

կողմից՝

կողմից՝
կողմից՝

կողմից՝

ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության և Բենիլյուքսի պետությունների (Բելգիայի Թագավորության, Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության և Նիդերլանդների Թագավորության) միջև անօրինական բնակություն հաստատած անձանց վերադարձնելու մասին Համաձայնագրի

Հայաստանի Հանրապետությունը և Բենիլյուքսի պետությունները (Բելգիայի Թագավորությունը, Լյուքսեմբուրգի Մեծ Դքսությունը և Նիդերլանդների Թագավորությունը), Հայաստանի Հանրապետության և Բենիլյուքսի պետությունների (Բելգիայի Թագավորությունը, Լյուքսեմբուրգի Մեծ Դքսությունը և Նիդերլանդների Թագավորությունը) միջև 2009թ. հունիսի 3-ին կնքված՝ անօրինական բնակություն հաստատած անձանց վերադարձնելու մասին Համաձայնագրի կիրառման նպատակով,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Դիմումը

(1) Վերադարձնելու մասին դիմումները ներկայացվում են, երբ Համաձայնագրի 4-րդ հոդվածի համաձայն վերադարձման ենթակա անձի ինքնությունը և քաղաքացիությունը ապացուցվել է կամ իրավաչափորեն ենթադրվում է: Դիմումները ներկայացվում են Համաձայնագրի 5-րդ հոդվածի համաձայն:

(2) Հայցող Պայմանավորվող կողմը հայցվող Պայմանավորվող կողմի իրավասու մարմնին հասցեագրում է դիմում:

(3) Դիմումը պարունակում է.

- հայցող Պայմանավորվող կողմի իրավասու մարմնի անվանումը և հասցեն, գործի համարը, և դիմումի ամսաթիվը,

- հայցվող Պայմանավորվող կողմի իրավասու մարմնի անվանումը և հասցեն,

- տեքստ՝ հետևյալ նախաբանով. Մենք միջնորդում ենք, որպեսզի այն անձը, որի առնչությամբ հիմքեր կան կարծելու, որ նրա նկատմամբ գոյություն ունի վերադարձնելու պարտավորություն Համաձայնագրի 2-րդ կամ 3-րդ հոդվածների իմաստով, վերադարձվի Բելգիայի Թագավորության (Նիդերլանդների

Թագավորության/Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության) տարածք Հայաստանի Հանրապետության տարածքից,

- վերադարձնելու ենթակա անձի տվյալները,
- անհրաժեշտության դեպքում, նշումներ անչափահաս երեխաների մասին,
- հայցող Պայմանավորվող կողմի իրավասու մարմնի ներկայացուցչի ստորագրությունը և պաշտոնական կնիքը:

(4) Վերադարձնելու ենթակա անձի մասին անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ տվյալները.

1. Անհատական տվյալներ.

- անուն և ազգանուն,
- ծննդյան տարեթիվ-ամսաթիվ,
- ծննդյան պետությունը և վայրը,
- սեռը,
- հայցվող Պայմանավորվող Կողմի տարածքում բնակության վերջին վայրը
- անհրաժեշտության դեպքում, նախկին ազգանուն, ծածկանուն կամ մականուն:

2. Անձնագրի կամ դրան փոխարինող ճամփորդական փաստաթղթի նկարագիրը (մասնավորապես՝ սերիան և համարը, տրամադրման վայրը և տարեթիվը-ամսաթիվը, վավերականության ժամկետը, տրամադրուղ մարմինը)

3. Ինքնության երկու (2) լուսանկար:

(5) Անչափահաս երեխաների վերաբերյալ նշումներ.

- անուն և ազգանուն,
- ազգակցական կապը ճամփորդողի հետ,
- ծննդյան օրը, ամիսը, տարին,
- ծննդյան վայրը:

Կցվում են.

- հայցող Պայմանավորվող կողմի տարածքում ծնված երեխայի համար՝ քաղվածք ծննդյան մասին,

- այլ պետության տարածքում ծնված երեխայի համար՝ քաղվածք ծննդյան մասին՝ հնարավորության դեպքում,

- հինգ (5) տարեկանից մեծ յուրաքանչյուր երեխայի համար մեկական լուսանկար:

Հոդված 2

Դիմումին պատասխանելը

(1) Հայցվող Պայմանավորվող կողմի իրավասու մարմինը պարտավոր է հայցող Պայմանավորվող կողմի իրավասու մարմնին պատասխանել Համաձայնագրի 6-րդ հոդվածում նախատեսված ժամկետներում:

(2) Դիմումի պատասխանը պարունակում է.

- հայցվող Պայմանավորվող կողմի իրավասու մարմնի անվանումը և հասցեն, գործի համարը, և դիմումի պատասխանի ամսաթիվը,

- հայցող Պայմանավորվող կողմի իրավասու մարմնի անվանումը և հասցեն,

- տվյալ անձի անունն ու ազգանունը, ծննդյան վայրը, տարեթիվը- ամսաթիվը,

- Համաձայնագրի 2-րդ կամ 3-րդ հոդվածների դրույթների համաձայն վերադարձնելու պարտավորությունը հաստատող հայտարարություն,

կամ

- բացասական պատասխանի դեպքում, բացատրական նամակ, որտեղ նշվում է, որ իրականացված ստուգումները թույլ չեն տվել պարզել տվյալ անձի ինքնությունը և/կամ վերադարձնելու պարտավորությունը նրա նկատմամբ կիրառելի չէ Համաձայնագրի 2-րդ կամ 3-րդ հոդվածների իմաստով:

Հոդված 3

Ճամփորդական վկայական

(1) Հայցող Պայմանավորվող կողմի իրավասու մարմինը հայցվող Պայմանավորվող կողմի դիվանագիտական ներկայացուցչությանը կամ հյուպատոսական հիմնարկին է փոխանցում դիմումի դրական պատասխանը՝ ճամփորդական վկայական տրամադրելու համար:

(2) Հայցվող Պայմանավորվող կողմի դիվանագիտական ներկայացուցչությունը կամ հյուպատոսական հիմնարկը դիմումի դրական պատասխանի դեպքում, անձին, որի վերադարձը թույլատրվել է, տրամադրում է ճամփորդական վկայական:

(3) Ճամփորդական վկայականը տրամադրվում է առնվազն մեկ (1) ամիս վավերականության ժամկետով:

(4) Եթե մինչև ճամփորդական վկայականի վավերականության ժամկետի ավարտը հնարավոր չէ անձին վերադարձնել, հայցող Պայմանավորվող կողմի իրավասու մարմինը այդ մասին տեղեկացնում է հայցվող Պայմանավորվող կողմի իրավասու մարմին: Երբ տվյալ անձի վերադարձնելը հնարավոր է դառնում, հայցվող Պայմանավորվող կողմի իրավասու մարմինը տրամադրում է նոր ճամփորդական վկայական՝ դարձյալ մեկ (1) ամիս վավերականության ժամկետով, հայցող Պայմանավորվող կողմի իրավասու մարմնի այդ նպատակով արված դիմումին հաջորդող հինգ (5) աշխատանքային օրվա ընթացքում:

Հոդված 4

Վերադարձնելու ընթացակարգը

(1) Հայցող Պայմանավորվող կողմի իրավասու մարմինը հայցվող Պայմանավորվող կողմի իրավասու մարմնին կտեղեկացնի համապատասխան անձին վերադարձնելու մասին՝ վերադարձնելու համար նախատեսված ժամկետից երեք (3) աշխատանքային օր առաջ:

(2) Այդ տեղեկությունը կհաղորդվի գրավոր և պարունակում է հետևյալ նշումները.

- հայցող Պայմանավորվող կողմի իրավասու մարմնի անվանումը և հասցեն, գործի համարը և վերադարձնելու հաղորդագրության ամսաթիվը,

- հայցվող Պայմանավորվող կողմի իրավասու մարմնի անվանումը և հասցեն՝

1. օդային ճանապարհով փոխադրելու դեպքում, հետևյալ նախաբանով տեքստ. 'Պատիվ ունենք Ձեզ տեղեկացնել, որ ստորև նշված նշումներին համապատասխանող անձը կվերադարձվի Բելգիայի Թագավորություն (Լյուքսեմբուրգի Մեծ Դքսություն/ Նիդերլանդների Թագավորություն/Հայաստանի Հանրապետություն)(օր, ամիս, տարի), մեկնումը օդանավակայանից, թռիչք N....., ժամը, ժամանումը օդանավակայան, ժամը:

2. եթե, ելնելով բժշկական նկատառումներից, փոխադրումն իրականացվում է ցամաքային ճանապարհով, տվյալ անձի վերադարձնելու մասին հաղորդագրության նախաբանը ձևակերպվում է հետևյալ կերպ. 'Պատիվ ունենք Ձեզ տեղեկացնել, որ ստորև նշված նշումներին համապատասխանող անձը կվերադարձվի Բելգիայի Թագավորություն (Լյուքսեմբուրգի Մեծ Դքսություն/Նիդերլանդների Թագավորություն Հայաստանի Հանրապետություն) (օր, ամիս, տարի), անցնելով միջազգային սահմանային կետով,

- անձի ազգանունը, անունը, ծննդյան թիվը և վայրը,

- գործի համարը և դիմումին պատասխանելու ամսաթիվը,

- անհրաժեշտության դեպքում, նշումներ, որ անձը, ելնելով իր առողջական վիճակից կամ տարիքից, կարիք ունի բուժման կամ հատուկ խնամքի,

- անհրաժեշտության դեպքում, նշումներ, որ անձը, կարող է միջադեպերի տեղիք տալ՝ անհրաժեշտ ուղեկցում ապահովելու համար:

(3) Այն դեպքում, եթե հնարավոր չէ պահպանել համապատասխան անձին վերադարձնելու համար Համաձայնագրի 6-րդ հոդվածի 2-րդ կետում նշված ժամկետները, հայցող Պայմանավորվող կողմի իրավասու մարմինը այդ մասին անհապաղ տեղեկացնում է հայցվող Պայմանավորվող կողմի իրավասու մարմնին: Երբ տվյալ անձի վերադարձնելը հնարավոր է դառնում, հայցող Պայմանավորվող կողմի իրավասու մարմինը տեղեկացնում է հայցվող Պայմանավորվող կողմի իրավասու մարմնին՝ սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված ժամկետներում:

Հոդված 5

Սահմանային անցման կետեր

Համաձայնագրի հիման վրա անձանց հանձնումը և ընդունումը կարող է իրականացվել հետևյալ վայրերում.

1. Հայաստանի Հանրապետության համար՝

Օդային երթևեկության դեպքում - Երևանի «Զվարթնոց» օդանավակայան

Ցամաքային երթևեկության դեպքում -

1. Բելգիայի Թագավորության համար՝

Օդային երթևեկության Բրյուսելի Ազգային օդանավակայան
դեպքում -

Օտարերկրացիների հարցերով գրասենյակի կողմից
Ցամաքային երթևեկության որոշվող սահմանային կետերը
դեպքում -

1. Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության համար՝

Օդային երթևեկության դեպքում - Լյուքսեմբուրգի օդանավակայան

Ցամաքային երթևեկության դեպքում -

1. Նիդերլանդների Թագավորության համար՝

Օդային երթևեկության դեպքում - Ամստերդամի «Շկիֆոլ» օդանավակայան

Ցամաքային երթևեկության դեպքում -

Հոդված 6

Իրավասու մարմինները

1) Հայկական կողմի համար իրավասու մարմինն է՝

Արտաքին գործերի նախարարություն

Հանրապետության Հրապարակ

Կառավարության 2-րդ շենք,

Երևան 0010,

Հայաստանի Հանրապետություն

Հեռախոս՝ + 37410 54 40 41 (301) հյուպատոսական վարչություն

Ֆաքս՝ + 37410 54 39 25

2) Բելգիական կողմի համար իրավասու մարմիններն են՝

1. Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններին դիմումներ ներկայացնելու, դիմումների պատասխանները ստանալու համար, Հայաստանի Հանրապետության դեսպանությունից անհրաժեշտ ճամփորդական վկայականներ ստանալու, ինչպես նաև համապատասխան անձանց վերադարձնելու մասին հաղորդագրություններ ուղարկելու համար՝

- Բելգիայի Թագավորության ներքին գործերի դաշնային նախարարություն

Օտարերկրացիների հարցերով ծառայության Գլխավոր վարչությունը

WTC II

Chaussee d'Anvers 59 b – 1000 Bruxelles

Հեռախոս՝ + 32 2 206 15 84 ինքնության հաստատման բաժին

+ 32 2 206 15 46 ինքնության հաստատման բաժին

Ֆաքս՝ + 32 2 274 66 17

2. Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններից ստացվող դիմումներն ընդունելու, դիմումներին պատասխանելու, ինչպես նաև համապատասխան անձանց վերադարձնելու մասին հաղորդագրություններն ընդունելու համար՝

- Բելգիայի Թագավորության ներքին գործերի դաշնային նախարարություն

Օտարերկրացիների հարցերով ծառայության Գլխավոր վարչություն

WTC II

Chaussne d'Anvers 59 b – 1000 Bruxelles

Հեռախոս՝ + 32 2 206 15 91 Գրասենյակ C

+ 32 2 206 15 92 Գրասենյակ C

+ 32 2 206 15 94 Գրասենյակ C

+ 32 2 206 15 51 Գրասենյակ C

Ֆաքս՝ + 32 2 274 66 11 Գրասենյակ C

3) Լյուքսեմբուրգյան կողմի համար իրավասու մարմինն է՝

Արտաքին գործերի և միգրացիայի նախարարություն

Միգրացիայի տնօրինություն

Փոստարկղ 752

L- 2017 Luxembourg

Հեռախոս՝ + 352 478 45 74

+ 352 478 45 46

Ֆաքս՝ + 352 478 22 16 08

4) Նիդերլանդական կողմի իրավասու մարմինն է՝

Արդարադատության նախարարություն

IND- ներգաղթի և հպատակագրման ծառայություն

Դուբլինի Գրասենյակ

Փոստարկղ 449

NL- 6900 AK Zevenaar

Հեռախոս՝ + 31 31 636 87 24

Ֆաքս՝ + 31 31 636 86 49

Հոդված 7

Փորձագետների կոմիտե

Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո երեսուն (30) օրվա ընթացքում, Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինները միմյանց կհաղորդեն Համաձայնագրի 11-րդ հոդվածով նախատեսված փորձագետների կոմիտեում իրենց պատվիրակության կազմը:

Հոդված 8

Լեզուն

Պայմանավորվող կողմերը միմյանց հետ հաղորդակցվում են ֆրանսերենով:

Հոդված 9

Եզրափակիչ դրույթ

Սույն Արձանագրությունը կկիրառվի Հայաստանի Հանրապետության և Բենիլյուքսի պետությունների (Բելգիայի Թագավորության, Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության և Նիդերլանդների Թագավորության) միջև անօրինական բնակություն հաստատած անձանց վերադարձնելու մասին Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից:

Կատարված է Բրյուսել քաղաքում 2009թ. հունիսի 3-ին, հայերեն, ֆրանսերեն և հոլանդերեն. ընդ որում բոլոր երեք տեքստերը հավասարազոր են: Տարընթերցման դեպքում կգերակայի ֆրանսերեն տարբերակը:

Հայաստանի

Բեղիայի

Լյուքսեմբուրգի

Նիդերլանդների

Հանրապետության

Թագավորության

Մեծ Դքսության

Թագավորության

կողմից՝

կողմից՝
կողմից՝

կողմից՝